



# GLENDALE UNIFIED SCHOOL DISTRICT

223 North Jackson St., Glendale, California 91206-4380

Telephone: 818-241-3111 • Fax: 818-548-9041

Մարտի 20, 2020թ

Գլենդեյլի կրթաշրջանի սիրելի աշակերտներ, անձնակազմ, ընտանիքներ եւ համայնք,

Մենք հասկանում ենք, որ նախկին շաբաթները դժվար էին մեր աշակերտների, ընտանիքների եւ աշխատակիցների համար: Մենք գնահատում ենք ձեր աջակցությունն ու համբերությունը եվ շարունակում ենք միտված լինել տրամադրելու ձեզ տեղեկություններ եւ աղբյուրներ, երբ դրանք դառնում են մեզ հասանելի: Այսօր, Լոս Անջելես վարչական շրջանի դպրոցների գերատեսուչ դոկտոր Դեբորա Դուարդոն հայտարարեց, որ առաջարկում է դպրոցները փակ պահել մինչեւ երեքշաբթի՝ 2020թ. մայիսի 5-ը, որպեսզի հնարավոր լինի կանխել COVID-19 վարակի տարածումը: Գերատեսուչ Դուարդոյի գործողությունը հաջորդում է մարտի 19-ի՝ Նահանգապետ Գավին Նյուսոմի եւ Լոս Անջելես վարչական շրջանի պաշտոնյաների ցուցումներին, համաձայն որի մարդիկ պետք է մնան տանը, եւ արգելվում են 10 հոգուց ավելի հավաքները:

Ուսումնական խորհուրդը եւ մեր կրթաշրջանի ղեկավարությունը միտված են երաշխավորելու Գլենդեյլի կրթաշրջանի ամբողջ համայնքի առողջությունն ու անվտանգությունը: Մենք լրջորեն ենք վերաբերում նահանգային եւ տեղական առողջապահական եւ կրթական ոլորտի պաշտոնյաների առաջարկություններին: **Ջետեւաբար, մենք որոշեցինք դպրոցները փակ պահել եւ երկարաձգել դպրոցից դուրս, հեռակա ուսուցումը մինչեւ հինգշաբթի մայիսի 5-ը: Հաջորդ շաբաթների համար մեր աշակերտների ժամանակացույցը հետեւյալն է՝**

- **Մարտի 23-27** – Երկարաձգված գարնանային արձակուրդ աշակերտների համար
- **Մարտի 30- մայիսի 4** – Աշակերտները սկսում են դպրոցից դուրս, հեռակա ուսուցումը եւ զարգացման ծրագրերը
- **Մայիսի 5** – Սկսվում է սովորական, դպրոցական ուսուցումը (կարող է փոփոխվել՝ հանրային առողջապահության եւ կրթական ոլորտի պաշտոնյաների առաջարկների համաձայն)

### Սննդի ծառայություններ

Մեր սննդի ծառայությունների բաժինը նախաճաշ եւ ճաշ կտրամադրի աշակերտներին երկուշաբթից ուրբաթ օրերին՝ սկսած մարտ 24-ից եւ կշարունակի դա անել մինչեւ դպրոցների բաց լինելը: Սնունդը կբաժանվի grab-and-go կենտրոններից, որոնք հասանելի կլինեն մի քանի դպրոցներում: **Հավելյալ տեղեկությունների համար այցելեք՝ [www.gusd.net/meals](http://www.gusd.net/meals):**

### Տեղեկություններ աշակերտների եւ ընտանիքների համար

Մենք մշակել ենք հեռակա ուսուցման տեղեկությունների կայք [www.gusd.net/remotelarning](http://www.gusd.net/remotelarning), որը ներառում է ուսումնական աղբյուրներ եւ կարելու տեղեկություններ տեխնոլոգիայից օգտվելու, սննդի ծառայությունների եւ հոգեբանական առողջության աջակցման համար: Հաճախակի այցելեք այս կայքերը եւ հետեւեք մեզ @GlendaleUSD Facebook-ի, Twitter-ի, and Instagram-ի էջերում նորություններին տեղեկանալու համար:

Այս պահին մեր գլխավոր առաջնայությունը մեր աշակերտների եւ աշխատակիցների առողջությունն ու անվտանգությունն է, իսկ մեր կարիքավոր ընտանիքները կստանան առողջ սնունդ եւ կօգտվեն այլ անհրաժեշտ պայմաններից: Առողջ եղե՛ք եւ հոգ տարե՛ք մեկը մյուսի համար առաջիկա շաբաթներին:

Հարգանքներով՝

Վիվյեն Էրիկսոն, Ed.D.  
Դպրոցների գերատեսուչ